



## ԴԱՏԵՍՄԱՆԻ ՕՐԸ

(ԽՈՄ - ԿԻՊՈՒԹԻ<sup>1)</sup>)

ԿՈՐԱԼԵԿԱԿՈՒ

(Մալառուական հեքենաթ)

Կրակը հանգաւ, լուսնետկըն է բարձրանում  
Գալլակերը արածում է անտառում

(ԵԿԵԿԱԿՈՒ)



### I.

Իտես ինչ կալ, — ով մարդ, հապա մի  
պարզ գիշեր զուրս եկ տնիցդ,  
կամ աւելի լաւ, զուրս արի հէնց  
գիւղից, բարձրացիր բլրակը, ու  
աշքդ ձգիր երկնքին ու երկրիս,  
Տես թէ ինչպէս պալծառ լուսնա-  
կը շրջում է երկնքի երեսին, ինչ-  
պէս պեճպըծին են տալիս ու աչ-  
քախփիկ անում աստղերը, ինչ-  
պէս երկրի երեսից թեթև ամպեր են բարձրանում և, կար-  
ծես գիշերով ճանապարհը կտրող ուշի մնացած օտարականնե-  
րի նման միմեանց ետեից մի տեղ շտապում... իսկ անտա-  
ռը հմալուած ականջ է դնում, ինչ թովիչ բաներ են կատար-

<sup>1)</sup> Հրէաները զարնան սկզբներում տօնում են իրենց  
նոր տարին, իսկ տասն օր անց գալիս է հօմեկիպուր (մաք-  
րութեան) տօնը. Մալառուական դա «Դատաստանի օր» է

ւում ալգտեղ կէս զիշերից լետով, իսկ քնչած դետակը զառում է, և խոխոջում, և ափի սօսիներին մի բան վնթիքնթում... Եւ անուհետեւ, դու, մարդ Աստուծոյ, ասա ինձ— ինչ ասես, ինչ հրաշք ասես չի պատահիլ ալս Աստծու տնակի մէջ, որ մարդիկ լուս աշխարհ են անուանում:

Կարող է ամեն բան պատահել, Ահա հէնց իմ մէկ բարեկամիս, Նովո-կամենկալի ջաղացպանի զլսին էլ, մի արկած էր պատահել... Թէ որ մինչև ալժմս դեռ ոչ ոք ձեղ ալդ բանը չէ պատմել, դէ լաւ ուրիմն, ես կպատմնմ, միայն ինձնից մի պահանջէք, որ երդուեմ, թէ ալդ ամենը ուղղէ է: Ամենին, շեմ երդուիլ, որովհետեւ ճիշտ է, ես ալդ ամենը ջաղացպանից իրենից եմ լսել, բալց և այնպէս, մինչև օրու էլ գեռ չգիտեմ—եղել է իսկապէս ալդ բանը, թէ չի եղել...

Են, եղել է թէ չի եղել, բալց և այնպէս եկէք ինչ որ պատահել է, պատմեմ ձեղ:

Մի իրիկուն, իրիկուան ժամից լետով, ջաղացպանը Նովո-կամենկալից տուն էր դառնում,—ջաղացը, աւելի չէ, զեղից հազիւ մէկ ու կէս վերս հեռու լինէր,—ջաղացպանիս քէֆը տեղը չէր, Բալց թէ ինչու քէֆը տեղը չէր, ալդ նա ինքն էլ կարող չէր ասել. Սկեղեցում ամեն բան կարգին, կանոնին էր եղել, և մեր ջաղացպանը, որ ձալնի կողմից ոչ ոքից լետ չէր մնալ, սազմոսասացի բեմից սազմոսներն այնպէս վարժ, ալնպէս բարձր էր կարդացել, որ մինչև անգամ սովոր մարդիկն էլ զարմացել էին. Ճծեսէք, տեսէք, ո՞նց է վրալ տալիս,—ասում էին նրանք զարմացած,—ող ասես մի խօսք չի հասկացում. Կատարեալ անիւ է—պատում է, զլորում, և գլուխ էլ, որ անիւը մատներ ունի, բալց կարծղ հսթէ կուզ մէկ մատը տեսնել: Հէնց ալդպէս էլ նա էր կարդում,—կարդունքն, ո՞նց որ անիւ կարծես քարած ճամբի վրալ զզրդում էր, բալց արի ու մի բառ ջոկիր:

Եւ ջաղացպանը ականջ էր դնում թէ մարդիկ ինչ են

---

Կոշտում և այն հաւատալիքը կալ, թէ ալդ օրը հրէական սատանան, Զանչողը, մանում է սինազող և մի հրէալ վերցնում, տանում. Հաւանօրէն ալդ հաւատալիքն առաջացած պիտի լինի այն հանգամանքից, որ հրէաները արևմտեան նահանգների մանր քաղաքներում հօմկըպուրը կատարում են չափազանց սրտալուզ և եղերերգական ծէսերով՝ քրիստոնեաչ ժողովրդի աչքի առաջ:

խօսում իրար մէջ, և ուրախանում էր. Հո կարողանում էր հոգու համար աշխատել—ոնց որ ամրապինդ երիտասարդը կալում, անպէս էլ սա իր լեզուով թակում էր, թակում, մինչև որ կոկորդը չորացաւ, քիչ էր մնում աչքները դուրս պլծնէին.

Ժամից լետով տէրտէրը ջաղացպանին տռն տարաւ, թէլ խմացրեց, մի շիշ էլ օդի բերին, սեղանի վրայ դրին ու դարտկած լետ տարան. Դրանից լետով լուսնակն արդէն դաշտերի վրայ բաւական բարձրացել, մտիկ էր տալիս փոքրիկ, բայց արագահոս կամենիկա գետակին, երբ որ ջաղացպանը տէրտէրի անից դուրս եկաւ և գեղի միջովն անցնելով իւր ջաղացը դարձաւ.

Գեղացիներից ոմանք արդէն քնած էին, ոմանք խրճիթում նստած ճրագի լուսով ընթրիք անում, իսկ կալին նաև ալնպիսիները, որոնց աշնանալին տաք ու պարզ գիշերը քաշել, վորոց էր դուրս բերել. Եւ ծերունիները նստած էին տան առաջ սաքուի վրայ, իսկ երիտասարդները քաշուել էին ցանկապատերի տակ, իրնիթների ու բալուտի թանձր ստուերում, անպէս որ նրանց տեսնել անգամ կարելի չէր, և միան ալստեղախնտեղ լուսում էր նրանց կամացուկ խօսելու ձանը, կամ զսպուած ծիծաղը, իսկ երբեմն էլ երիտասարդ զուղի անզգուշ համբուրը... Էհ, ինչ ասես չի պատահիլ ահա, մի աւպիսի պարզ ու տաք գիշեր բալուտի թանձր ստուերի մէջ.

Եւ թէպէտ ջաղացպանը մարդկանց չէր տեսնում, բայց նրանք տեսնում էին ջաղացպանին, որովհետեւ նա հէնց փողոցի մէջ աեղով, լուսնեակի լուսովն էր գնում. Ուստի և տեղտեղ նրան ասում էին.

—Բարի իրիկուն, պարոն ջաղացպան. Տէրտէրի անից հո չբք գալիս Ալսքան ժամանակ նրա մօտ հո չբք հիւրասիրուել.

Ամենքն էլ գիտէին, որ միայն ալդանդից է գալիս նա, ուրիշ տեղ չունի, և ջաղացպանին դիւր էր գալիս ալդ բանը, ուստի և նա հպարտութեամբ ու առանց քալերը կանգնեցնելու պատասխան տուեց.

—Էհ, վաստ չէր, բաւական լաւ հիւրասիրուեցալ,—և հըպարտ քալուած քով առաջ գնում...»

Իսկ ոմանք լուս նստած էին լերդիկի տակ ու սպա-

սում, որ շուտով անցնի, գնալ և չնկատէ իրենց ալդտեղ եղածը. Բայց մեր ջաղացպանն ախ մարդը չէ, որ թողնի գընալ կամ մոռանալ ախնալիսի մարդկանց, որոնք իրենից պարտքի ալիւր կամ տոկոսով փող էին առել, կամ ցորեն աղալու համար պարտք մնացել. Խնչ անենք, թէ նրանք ստուերի միջից լաւ չէին երեսմ կամ նստած էին լուս ու մունջ, կարծես պապանձուած լինէին, բայց և այնալս ջաղացպանը կանգ էր առնում և խօսում.

—Ն՞շ, բարի աջողում, Ալստեղ ևք Ռւզում էք լոեցէք, ուղում էք՝ չէ, ալդ ձեր գիտնալու բանն է, բայց պարտքերդ, որովհետև ժամանակը վաղն է, առաւտը կանուխ: Խակ ես չեմ սպասիլ, գիտցած լինիք:

Եւ իստու գարձեալ փողոցի միջով շարունակեց իւր ճանապարհը, խակ նրա ստուերը կողքից անբաժան վաղում էր հետը. և ինչ ստուեր—սեւ, սիպ սե, ախնալս որ ջաղացպանը, որ գիր-կարդումով մի մարդ էր և հարկաւոր տեղում զիտէր խելքին զոռ տալ, ինքն իրեն մտածում էր.

—Խ'նչ սև ստուեր է, զարմանալի բան... Ձիւնից սպիտակ շոր հազնիս ու ստուերդ ալսալս ածուխից էլ սև լինի...:

Ալստեղ նա եկաւ հասաւ ջուդ ևանկէլի օղետանը, որ կանգնած էր բլրակի զլիսին, ճանասլարհի մուտքի մօտիկ. Արեի մալը մտնելով շաբաշն էլ վերջացել. էր արդէն, բայց և ախնալս տէրը օղետանը չէր, հապա կար միայն վարձուորը՝ Խալրկոն՝ որ միշտ շաբաշ ու տօն օրերին տիրոջ ու նրա տնեցիների տեղն էր բռնում. Խալրկօն նրանց համար ճրադ վառում, իւր ձեռներով լաճախորդներից փող ստանում, քանի որ ջնուդները—ալդ սաղ աշխարքն էլ գիտէ—խիւտ մօտիկ են իրենց հաւատին—ամենեին տօն օրը ոչ ճրադ կլառն, ոչ ձեռները փող կրանեն—մեղք է. Ալս ամենը նրանց տեղաք վարձուոր Խալրկօն էր անում. Խակ ևանկելը կամ նրա կինը, և մէկ-մէկ էլ նրանց տղերքը աչքները չորս բացած նալում էին, թէ մի գուցէ շահանոցը կամ արասանոցը դախլը ընկնելու տեղ մի հունարով Խալրկօի ջերը մանի, և խորամանկ մարդիկ են, օ՛, շատ խորամանկ,—մոտածում էր ջաղացպանը:—Ճամբան զտել են, համ իրենց Աստըծուն են հաճուանում, համ էլ կոպէկները չեն կորցնում. Խելօք ժողովուրդ է, ալս էլ պէտք է առած, —մերոնք նրտեղը:

Նա կանգ առաւ օղետան դրանը, հրապարակի վրա,

որը պինդ թակուած էր բաղմաթիւ մարդկանց ոտների տակ, որոնք թէ վաճառանոցի և թէ հասարակ օրերը, ամբողջ շաբաթը, խոնառում են ալդանդ, և հարցրեց.

— Եանկէլ, էլ, Եանկէլ! Տանն ես, թէ չէ.

— Չես տեսնում, տանը չէ,— զախլի ետեից պատասխանեց վա/ձուրը:

— Բաս ուր է:

— Ուր է,— ուր պիտի լինի, քաղաքում,— պատասխանեց վարձուորը: — Միթէ, պարոն ջաղացպան, չգիտէք, թէ ինչ օր է ալսօր նրանց համար:

— Ի՞նչ օր է որ:

— Խօմկիալուր է:

«Որտէս թէ բան հասկացրեց»— մտածեց ինքն իրեն ջաղացպանը: Եւ պէտք է ձեզ ասեմ, որ թէպէտ ալս վարձուորը մի հասարակ վարձուոր էր, — չէ թէ միայն հասարակ, հապա և ջնողի վարձուոր, — բայց և ալնպէս զիր-կարդում դիտցող, բան տեսած ու հպարտ մարդ էր, ծառալութիւնից վերադարձած զինուոր: Սիրում էր քիթը վեր պահել ու պարծենալ, մանաւ անդ ջաղացպանի առաջ, Եկեղեցում սաղմոս էլ էր կարդում, ջաղացպանից պակաս չէր, միայն ճաքած ձալն ունէր ու մէկ էլ քմի մէջն էր ասում: Ազդ սատճառով էլ ժամադրքի վերաբերմամբ կարող էր մեր ջաղացպան Փիլիպպի հետ մրցել, բայց Առաքեալի մէջ—ամենեին: Իսկ թէ ուրիշ բաների մէջ—երբէք լետ չէր մնալ: Թէ ջաղացպանը միխօսք ասաց, նա խկոյն պատասխանը կտաչ և ալն՝ անպատճառ հակառակը կասէր: Թէ ջաղացպանն ասի՛ «չգիտեմ», սախկոյն—բայց ես զիտեմ: Անհամ մարդ է...: Ահա ալժմ էլ մի ալնպիսի խօսք ասաց, որ ջաղացպանս եղունգներով զըլ-խարիկ տակ քորեց, խակ ինքը զեռ ուրախանում էլ է:

— Դուցէ զուք զեռ ալժմ էլ չհասկացաք, թէ ինչ օր է ալսօրս:

— Ինչիս է որ ջնուղի ամեն մի տօնը գիտենամ, — նեղացած պատասխանեց ջաղացպանը: — Աս նրանց մօտ հօ չմմ ծառալում:

— Ամեն մի՛: Հենց բանն էլ ալն է, որ սա «ամեն մի» տօն չէ է: Ալսօր մի ալնպիսի տօն է նրանց համար, որ տարին մի անդամ է զալիս միայն: Ազդ դիու ինչ է որ: Աւելին

ասեմ,—աշխարքիս երեսին ուրիշ ոչ մի ազդ մի արտիսի  
տօն չունի:

—Դէ լմւ, կասէք:

—Կարծեմ Զանչողի (Խաղուն) մասին դուք էլ լսած  
կլինիք:

—Հմա:

Զաղացպանը դարմաշած մնաց,—և ճշմարիտ, ինչպէս  
էր, որ գլխի չէր ընկել, —և նա ջնուզի խրճիթի պատուհանից  
ներս նալեցաւ. Բնչ տեսնիր—լատակին խոտ ու դարման էր  
փռած, երկջանեան ու եռաջանեան աշտանակների վրայ վա-  
ռած էին բարակ, ճարպից թափած մոմերը և լսում էր մի  
տեսակ, մի քանի մարդանասակ մնջուների բզզոց. Ալդ  
Ասանկէլի նոր առած երկրորդ, նորատի կինն ու մի քանի էլ  
ջնուզի ճուտերն էին, աշքերը փակած, շրթունքները շըմցը-  
մացնելով աղօթք բզզացնում, և ալդ բզզոցի մէջ ո՞ր ասես  
մի բառ ջոկել կարելի չէր. Բայց մի ջոկ, մի զարմանալի  
բան կար ալդ աղօթելու մէջը՝ կարծես թէ ջնուզների ներսը  
մի ուրիշը նստած է, ու նստած լաց է լինում, մի բան լի-  
շում, խնդրում, աղերսում: Բայց թէ հոմն են խնդրում, Բնչ  
են խնդրում—ո՞լ է իմանում. Ալսքանս միան երևում է, որ  
նրանց խնդրուածքը օդետան ու փողի համար չէ...»

Ջնուզների աղօթքին ականչ զնելոց՝ մեր ջաղացպա-  
նի հոգին խռովեցաւ,—և ափսոսում էր, և սիրտը ճմլում:  
Նա դարձաւ, վարձուորի երեսը նալեցաւ, որ նոյնպէս դրան  
ետեկից լսում էր ալդ բզզոցը, և ասաց.

—Աղօթք են անում...: Ուրեմն, ասում ես, Ասանկէլը  
քաղաք զնաց:

—Հմա, գնաց:

—Մէկ ասող լինի, Բնչ գործ ունիս: Հապա եթէ Զան-  
չողը հէնց նրան չանչի:

—Հէնց բանն էլ ալդ է,—պատասխանեց վարձուուրը:—Սս  
որ լինէի նրա տեղը, սաղ աշխարքս ինձ բախչէին տեղիցս  
չէլ չարժուիլ—թէպէտ ամեն տեսակ անհաւասոների դէմ պա-  
տերազմի եմ գնացած ու շքաղրամ էլ ունիս: Պինդ կնստէի  
տանս,—տնից հո չէ չանչելու:

—Ինչու: Որ չանչել ուղի, տան միջից էլ կարող է չան-  
չել, ինչի տան միջից կարելի չէ:

—Ինչու...: Զարմանում եմ, որ հարցնում էլ էք: Որ ու-

— Ե՞ք զլիսարկ կամ ձեռնոց առնել, ուր կդնաք առնելու,  
— Ուր պիտի գնամ, ի հարկէ խանութ,  
— Խնջու խանութ:  
— Բան ասաց: Որովհետև խանութում շատ-շատ կար,  
— Հա, հէնց ալդ է: Այժմ սինադոդ որ մտնես—սիրտդ  
ինչքան ջնուդ կուղէ: Խռնում են, լաց լինում, աղաղակում,  
ալնաղէս որ ձակները սաղ քաղաքի մէջ փոռւած, մէկ ծալրից  
միւսն է հասնում: Խակ ուր որ մժեղներ են հաւաքւում, ալն-  
տեղ էլ թռչունն է զնում: Զանչողը լիմար պիտի լինի, որ  
ալդանդ գնալու տեղ անտառներ ու զեղեր ման գալ, ջնուդ  
վինարի: Տարուալ մէջ մէկ օր ունի, ան էլ ալդակսով ի զուր  
պիտի անցկացնի: Մէկ էլ որ, ամեն գեղի մէջ ոռ ջնուդ չի  
լինում, մէկտեղ կար, մէկ տեղ-չկար:

— Ե՛, ասենք ազդպիսի տեղ քիչ կար:  
— Քիչ, բայց ոռ կալ...: Այս էլ կար որ շատի միջից ընտ-  
քելն էլ հեշտ է:

Երկուան էլ լրեցին: Զաղացպանը ման էր միտք անում,  
Թէ վարձուորը նորից խօսքով բանեց իրան, և դարձեալ զըժ-  
գոնութիւն զգաց: Խակ պատուհաններից շարունակ լսում էր  
ջնուդների լացն ու աղօթքը:

— Երեկի իրենց հօր համար են աղօթում,—ասաց շաղաց-  
պանը:

— Շատ կարելի է:

— Դեռ տեսնենք ալդ ուղիղ բան է,—նորից սկսեց ջա-  
ղացպանը, որ համ ուղում էր վարձուորի սիրտը հանել, համ  
էլ, որպէս մարդ, մի քիչ խղճում էր ջնուդին:—Գուցէ մար-  
դիկ հէնց դուրս են տալիս միան: Սխմախին մէկը հնարած  
լինի, միւսն էլ հաւատացած:

Այս խօսքերը վարձուորին դիւր չեկան:

— Ակդպէս էլ է պատահում,—ասաց նա, — մէկ էլ տեսար  
մէկը, առանց մտածելու, լանկարծ մի բան ասաց... Հէնց ձեր  
ասածն օրինակ,—միթէ Յս եմ հնարել ալդ բանը, կամ  
հալրս, կամ խնամիս է հնարել, քանի որ ամեն մի քրիս-  
տոնեալ մարդու էլ լաւանի է դա:

— Դուք ձեր աշքովը տեսնել էք, — զալրադնած հարցրեց  
շաղացպանը, որ վարձուորի արհամարհական խօսքերը սրախն  
էր առել:

Այս էլ ասեմ, որ ջաղացպանս որ տաքանար, կակսէ լու

երբեմն էլ պնդել, թէ մինչև իւր աչքովը չտեսնի, չի հաւատալ, որ սատանակ կալ աշխարհումս Հէնց ալժմս էլ նա խիստաքացել էր:

— Իսկ դուք, — ասում է, — ձեր աչքովը տեսնել էք, Բաս որ չէք տեսել, միք էլ ասիլ, թէ կար, ալ ինչ:

Մեր վարձուորը թէպէտ պաշտօնաթող ղինուոր էր և կտրուկ էլ մարդ, բայց ալստեղ ձախը փոքր ինչ քաշ զցեց և մինչև անզամ հաղալու պէս արաւ: Բայց և ալնպէս—կրողը տանի—այն մարդը չէր, որ բոլորովին պոչը իրան քաշէր:

— Ի՞նչ սուտ ասեմ, — ասում է, — աչքովս տեսած չեմ: Իսկ դուք, պարոն ջաղացպան, սկի Կիե տեսնել էք:

— Ոչ, չեմ տեսել, ես էլ սուտ չեմ ասի:

— Թէպէտ տեսած էլ ջինիք, բայց և ալնպէս հո Կիեը կմա:

Ալստեղ ջաղացպանս մի ալսպիսի պարզ բանի վրաւ աչքերը չուեց:

— Ի՞նչ որ ուղիղ է՝ ուղիղ է, — համաձայնեցաւ նա, — թէս Կիե չեմ տեսել, բայց դիտեմ որ կար...: Տեսնում եմ, որ պէտք է հաւատալ, երբ ասում են թէ Ջանչող կար: Բայց, գիտէք, բանը... ուզում էի հարցնել, ումիթց էք իմացել:

— Վա, ումիթց, իսկ դուք ումնից էք իմացել, թէ Կիեւ կար:

— Ի՞նչ էք վրալ տալիս Լեզու եմ ասում է: Լեզու չէ, թուր է: չորանար ալդ լեզուդ:

— Իմ լեզուս չորանալուց օդուտ չկար: յաւն ալն է, որ երբ ամենքն էլ պնդում են մի բան, դուք էլ հաւատաք դրան: Թէ որ ամենքն էլ նոյնն են ասում, նշանակում է, որ ուղիղ է: Որ ուղիղ չինէր, ալն ժամանակ ամենքն էլ չին ասիլ, հապա միան զրախօսները կիսուէին. ահա ձեզ:

— Բւ րւ րւ, բլրլում էք... Համբերեցէք մի րոպէ: Ալն-պէս էք վրալ տալիս, հէնց գիտենաս սանդ լինիք ծեծելիսու Ալժմ ինքս էլ եմ տեսնում, որ ծուռ ճամբալ եմ բռնել...: Բայց, գիտէք, դարձեալ կուղէի իմանալ, որտեղից է դուրս եկել դա, ողովրդի պատմածը...:

— Անտեղից է, որ ամեն տարի կատարում է ալդ: Ինչ որ լինում է, ալն էլ խօսում են, իսկ ինչ որ չի լինում, նրա մասին խօսելն էլ աւելորդ է...:

— Ի՞նչ մարդ է: Բայց չէ, սպասիր, ես որ քեզ չկանգ-

նացնեմ, ջաղացի չախչախի նման գնալու ես հա դնալու վերջապէս ասա մի տեսնենք, բնչ է պատահում, Դու ինձ միս ասա.

—Հը՞ ուրեմն դուք այն էլ չգիտէք, թէ բնչ է լինում դատաստանի օրը....

—Որ գիտենալի, չէի հարցնիլ, Շատոնց է լսում եմ, որ մարդիկ դուրս են տալիս, ալ ոնց որ դու—Զանչող, Զանչող, բայց թէ բնչ մտքով են ասում, չեմ իմանում.

—Թէ որ ալզպէս է, վաղուց ասէիք էլի, արդէն պատմած կլինէի, թէ չէ ես ալպիխի հպարտ մարդիկ չեմ սիրում. ասենք նրանց օղի է պէտք, բայց յեռ սկիզբը ջրի մասին խօսք բաց կանեն—«Չուր կիմէի, բայց համով չէ»։ Որ ուզում էք, ձեզ պատմեմ, լսեցէք. ինչքան էլ որ յինի, դարձեալ ես աշխարք տեսած մարդ եմ, ձեզ նման տանը չեմ փտել, Քանի տարի քաղաքում եմ ապրել, ջնուղների մօտ էլ առաջին անդամ չէ ծառայած»։

—Մեղք չէ, —իւր կասկածը լայտնեց ջաղացպանը,

—Դուցէ ուրիշի համար մեղք է, բայց զինուորին ամեն կարելի է։ Հենց ալզպիխի թուղթ էլ տրուած է մեղ։

—Հա, թէ որ թուղթ է տրուած...»

Սրանից լսող զինուորն արդէն սկսեց բարեկամաբար պատմել Զանչողի մասին բոլոր գիտեցածը, պատմեց և այն, թէ ինչպէս նա ամեն տարի ալս օրը մի-մի ջնուդ է չանչում, տանում։

Զանչողը, պէտք է ձեղ էլ ասեմ, քանի որ ջաղացպանի նման դուք էլ չգիտէք ալդ, մի ջոկ տեսակ ջնուդի սատանալ է։ Նա, ասենք, ամենք բանով նման է մեր սատանալին, նոյնպէս սև է, նոյնպիսի կոտոշներ ունի և թեերն էլ—ոնց որ մի ահազին շղիկանի թեեր. միան դաւիկներ ունի և գլխին թասակ, ու մէկ էլ միմիան ջնուղների վրայ իրաւունք ունի։ Բայց հէնց որ մի քրիստոնեալ մարդու պատահի, թէկուզ ճիշտ կէս գիշերին, մի անապատ տեղ կամ թէ չէ լճացած ջրի ափին լինի, ոնց որ վախկոտ շուն կթողնի, կըփախչի։ Խակ ջնուղների վրայ նրան իրաւունք է տրուած—ամեն տարի ընտրում է մի ջնուդ և վեր առնում տանում..»

Ահա հէնց ալդ ընտրութիւնն անելու համար է Իօմ-Կիսուրը, զատաստանի օրը։ Դեռ ալդ տօնից օրեր առաջ ջնուզները սկսում են աղօթք անել, լաց են լինում, շորերը պա-

տառոտում և մինչեւ անդամ չցիտեմ ինչու վառարանից մոխիր հանում, զլուխները ցանում, Խրիկուանից ամենքը լուսացւում են զիտակի կամ ճճակների մէջ, իսկ արեւ մար մտածովը խեղճերը գնում են աղօթատուն, և մի աշնպիսի աղմուկ-աղաղակ բարձրացնում, որ Աստուած հեռու անի, — ձակները զլմներն են ձգում, իսկ վախից աչքները փակում... իսկ ալդ միջոցին, հէնց որ մութն ընկաւ ու երեկոյեան աստղը ծագեց, Զանչողը դուրս է գալս իւր բնից ու պառլապույտ անում աղօթատան զլախին, ու թերով պատուհաններին խփում, ու իրեն համար որս ջոկում, Ամենից աւելի վախըն ու սարսափը ջնուղների վրաէ կէս զիշերին է ընկնում. Նրանք դիտմամբ վառում են բոլոր մոմերը, որ անձուկ չինի, բոլորը ղետին են փառում, ախնպէս կանչվռտում, հէնց դիտենաս մորթելու են տանում. Եւ մինչ նրանք ախնպէս վէր ընկած առագ ու շիւանի մէջ են լինում, Զանչողը, մի մեծ ագռաւի նման, մտնում է ներս. ամենքն էլ զգում են, թէ ինչպէս նրա թեսերի շարժումից սառչում է սրտները, իսկ նա, որին որ առաջուց ընտրած է լինում, զգում է, որ սատանի մադիլները խրւում են իւր մէջքին. Ե՞՞. միան պատմնլոց արդին մարդուս ջանը սրտում է. դէ իմացիր ինչ կինի խեղճ ջնուղի հալը.... Ի հարկէ, ինչ որ ջանումը որժ կաւ, սկսում է կանչել. Բայց ովէ է լսողը, քանի որ հէնց ամենքն էլ դժի նման զորդուոց են զցել Ո՛վ գիտէ, գուցէ կողքին. եղողները հէնց լսում էլ են, ինչ կարող են անհել—նրանք ուրախ են, որ իրենք պրծել են...»

Ալարձուոր Խալրիօն հէնց ինքն էլ քանի անդամ լսել է, թէ ինչպէս զրանից լսող դիւղում փող է հնչելիս եղել, և ինչ զիւ, խղճալի ու երկար ձախնով... Ալդ աղօթատան ծառան է իւր խեղճ եղբօր ետենից բարի ճամբար ասում. իսկ ալդ միջոցին միւսները գաւթում հաղնում են իրենց ոտնամանները (որովհետեւ նրանք գուլբով են աղօթատուն մըտնում) և սուս ու փուս տուն դառնում Խալրիօն ալս էլ է տեսել, թէ ինչպէս նրանք իմբովին կանչնում են լուսնի առաջ և մի բան վնթինմում, և ոտքի ծալրերին բարձրացած զիշերալին երկինքը դիտում... Եւ ալդ ժամանակ, երբ արդէն բոլորն էլ հեռանում են, գաւթում գետնին մնում է մի զուգ ոտնաման, որ իւր տիրոջն է սպասում... Ե՞ ինչքան ուղում է սպասի, տէրը չկալ. որովհետեւ ալդ միջոցին Զ անչու-

զը սանամանների տիրոջը չանչած, օդի մէջ թները շարժելով սարեր ու ձորեր, ղաշտեր ու անտառներ է կտրում և աշխատում, որ քրիստոնէի աչքի չընկնի.... Անիծեալը ուրախ է լինում, երբ ամպամած ու մութ գիշերուալ է պատահում. Բայց եթէ խաղաղ ու պարզ գիշեր լինի, ալ ինչպէս ալսօր, երբ լուսինը ալնպէս է լուսաւորում, հէնց գիտենաս ցերեկ լինի, կտրելի է ասել, որ սատանան ի զուր է ջափա քաշել....

— Ինչու, — հարցրեց ջաղացպանը ու վախեցաւ, թէ մի դուցէ շատախօս Խալրկոն զրա համար էլ սկսի իրեն լանդիմաննել. Բայց սա ալս անդամ հանդարտ պատասխանեց.

— Նրա համար, որ բաւական է թէկուզ մի հասարակ քրիստոնեալ մարդ, թէ կուղ հէնց դուք, օրինակ, ասէ. «թող, ուր իմն է. — նա իսկոյն ջուղին բաց կթողնի. Թները կթափահարէ, ոնց որ գնդակահար եղած անդղ խղճալի կերպով կըկանչէ և, ամբազջ տարուալ աւարից զրկուած, կթռչի կերթակ Խակ ջուղի զետին կընկնի. Լաւ եթէ շատ բարձրից չի վէր ընկնիլ, կամ վափուկ տեղ, ճահճի մէջ կընկնի. Թէ չէ, միենունն է, կորած է ի զուր.... Ոչ սատանին է վակ դառնում, ոչ իրան:

— Ա՛ քեզ բան, — մտքի մէջ ընկած պատասխանեց ջաղացպանը և վախեցած՝ աչքը ձգեց երկինք, որտեղ լուսինը, ճշմարիս որ ցերեկի նման լուս էր տալիս. Երկինքը պարզ էր, միայն լուսնի ու անտառի միջն, որ գետակի միւս կողմը հեռուում սեին էր տալիս, սև փետրի նման, արագ արագ վազում էր մի փոքրիկ ամպ. Ամպ էր՝ ամպի պէս. բայց ալս բանս մի քիչ տարօրինակ թուաց ջաղացպանիս, — կարծես քամի էլ չկալ, թիերի վրայ տերեններն անշարժ կեցած են, հէնց իմանաս հմալուած լինին, բայց ամպը ուղիղ, թռչունի նման, դէպի քաղաք է թռչում:

— Հապա մի տեսէք, ինչ եմ ցոլց տալու, — սսաց ջաղացպանը,

Վարձուորը դուրս եկաւ օղեանից և, մէջքը դրան կողքին դէմ տուած, սառնութեամբ հարցրեց.

— Ի՞նչ կալ որ: Բան էք դտել ցոլց տալու. Ամպ է, ինչ անենք, ծէբը նրա հետ....

— Բայց դուք ալս էլ նալեցէք, — քամի կալ:

— Հ'ըը'... Ա՛ քեզ բան, — զլիսի ընկաւ վարձուորը. — Ուղիղ քաղաք է քշում....

Նւ երկուսն էր, զլուխները վեր բարձրացրած, վկները  
քորեցին:

Իսկ պատուհաններից շարունակ լսում էր ջնուդների  
բղղոցը, երեսմ էին նրանց ղեղնած, երկարացած դէմքերը,  
զլսարկները յետ քաշած, աչքները փակ, շրթունքներն ան-  
շարժ... Զնուդի լակոտները լալիս էին, կտոր-կտոր լինում,  
և ջաղացպանին դարձեալ թուաց, թէ մէկ ուրիշն է նրանց  
ներաը նստած լաց լինում, մի ախակիսի բան խնդրում, որը  
վաղուց, շատ վաղուց կորած և մասամբ էլ մոռացուած է  
արդէն....

—Ե՛ն, տուն գնալու ժամանակ է.—ուշքի եկաւ ջաղաց-  
պանը.—Իսկ ես փող էի բերել նանկէլին տալու....

—Կարելի է: Նրանց տեղ ես եմ ընդունում,—ուատաս-  
խանեց վարձուորը մի կողմ նաև ելուի:

Բայց ջաղացպանը ախակէս ձեացրեց, իբր թէ չէ լսել,  
թերածը մի ախքան էլ փոքր զումար չէր, որ առանց ալլե-  
ալլութեան մի որ և իցէ վարձուորի ձեռը դնեն, ախ էլ մի  
ախակիսի թոկից փախած, պաշտօնաթող դինուորի: Սէդքան  
փողի համար, ինչպէս ասում են, աշքին-ունքին չէր նալիւ,  
թէ դրել ես-զտիր, ոչ թէ դիւզից, նահանգից էլ կորող էր  
փախչել Յետող դնա ու ետեից ման արի:

—Մնաք բարով, —ասաց ջաղացպանը:

—Երթաք բարով, Բայց փողը կարող էի վերցնել:

—Ի՞նչ նեղութիւն, իրան կտամ:

—Ինչպէս կուզէք: Առնելը ես էլ կառնէի, մի մեծ նե-  
զութիւն չէ: Էն, օղետունն էլ փակելու ժամանակ է: Նրեսմ  
է, որ ձեզանից զատ ոչ մի շուն չպիտի դակ ախօր:

Վարձուորը դարձեալ մէջքը դրան կողքին քորեց, ջա-  
ղացպանի Լտեկից մի տեսակ անհաճոյ կերպով սուլեց ու ըս-  
կաւ դռները գոցել. դրան վրալ սպիտակ ներկով նկարած էր  
մի աման, մի բաժակ ու մի շիշ: Իսկ ջաղացպանը ցած իջաւ  
ըլլակից ու, սպիտակ շորերը հագին, սկսաւ փողոցով առաջ  
զնալ, իսկ նրա ետեից դարձեալ վազ էր ատլիս նրա սե,  
սիպսն ստուերը:

Բայց ալժմ ջաղացպանն արդէն իւր ստուերի մասին չէ:  
որ մտածում էր, հապա բոլորովին մի ուրիշ բանի մասին...

## II.

Զաղացպանը տառը սամէն չէր անցկացել, որ փոքրիկ պարտիզում ցանկապատի ետևը մի բան խշուշաց, չըխկաց, կարծես երկու մեծ թռչուններ թռան։ Բայց ալդ թռչուն չէր, հապա մի երիտասարդ ու մի աղջիկ, որ ստուերի միջից լանկարծ ջաղացպանի դուրս գալուց վախեցել էին։ Սակայն, ինչպէս երևում է, երիտասարդը շատ էլ վախկոտներիցը չէր, աւելի խորը, ստուերի մէջ հեռանալով, ալնպէս որ հազիւ բալուտի տակ սպիտակին էր տալիս երկուսի պատկերը, նա ձեռքով շփոթուած աղջկանը պինդ գրկած, դարձեալ շարունակում էր իւր զրոյցը։ Իսկ երբ մի քիչ էլ հեռացաւ, ջաղացպանը մի ալնպիսի բան լսեց, որ սաստիկ նեղանալուց կանգ առաւ....

—ՀԵ՞, ով ես չգիտեմ, բայց լաւ կանէիր մի քիչ համբերէիր ու չպահպէիր, —ասաց նա։ —Թէ չէ ալնպէս պինդ ես չփացնում, ոնց որ սոխակը թփերում, —ասաց նա ցանկապատին մօտենալով։

—Իսկ դու, շոն շան որդի, ինչ բան ունիս, որ քեթզ ուրիշի բակն ես կոխում, —պատասխանեց ստուերում կանգնած երիտասարդը։ Սպասիր, ալս բոլէիս ես քու ոտքը կը ջարդեմ։ Կհասկանաս, թէ ինչ ասել է ուրիշներին խանդրելը։

—Լաւ, լաւ, —ասաց ջաղացպանը հեռանալով։ —Հէնց գիտենաս մի մեծ բանի վրայ ես.... Եւ ալնպիսի շտահով ես պահում, որ լսողի նախանձն ես շարժում։

Նա կանգ առաւ, մտածեց, գլուխը քորեց ու լետով, ճանապարհից ծռուելով, թռաւ մի ցանկապատի վլալից և բանջարանոցի միջովն անցաւ, գնաց գէպի ալրի կնոջ իւըրձիթը, ալն՝ որ գեղի ծալրին, առանձնացած, բարձր սօսիների տակն է գտնւում.... Փոքրիկ խրճիթ էր, ծռուած, զետին խոնարհած։ Լուսամուտն էլ ալնքան մանրիկ բան, որ եթէ գիշերս մի քիչ մութը լինէր, չէիր տեսնիլ։ Բայց ալժմ սաղիքնիթը հէնց գիտենաս վառուած լինէր լուսնի լուսով։ տանիքի լարդը կարծես ոսկի լինէր, պատը՝ արծաթ, իսկ լուսամուտը պատի վրայ, կկոցած աշքի նման, սելն էր տալիս։ Պատուհանից լուս չէր երևում, նընի պառաւն ու աղջիկը

Ընթրիքի բան չունէին, ուստի և կարիք չկար ճրագ վառելու. Զաղացպանը կանգնեց, երկու անդամ կամացուկ թրխկացրեց պատուհանն ու մի կողմ քաշուեցաւ.

Շատ չսպասեց և աղջկալ երկու թմրլիկ ձեռներ պինդ փաթաթուեցան նրա վլովը, իսկ երբ աղջկալ ջերմ շրթունքները ջաղացպանի բնրանին կապան, կարծես բեխների արանքում մի բան վառուեց: Է՛ն, ինչպէս ասեմ: Թէ որ ձեզ ալրապէս համրուրող եղել է, ալն ժամանակ ինքներդ էլ կիմանաք, իսկ թէ մի ալրախիսի բան ձեր կեանքում պատահած չէ, ալն ժամանակ պատմել էլ չարժէ:

—Ֆիլիպկո, հողիս, սիրելիս,—ասում էր աղջիկը քըճնուելով,—եկար վերջապէս... սպասելուց աչքս ջուր կտրեցաւ, առանց քեզ չորացել, ալս անջուր արօտին եմ նմանելու...»

«Է՛, փառք Աստուծու, որ դեռ չես չորացնէ—մտածեց ջաղացպանը՝ աղջկալ փափկի իրանը ձեռքով հուպ տալով!—«Փառք Աստուծու, դու բան չկալու»

—Իսկ երբ պէտք է հարսանիքի պատրաստուհնք, —առաց աղջիկը դեռ ձեռները Ֆիլիպկի ուսերին դրած և իւր, աշնանալին գիշերուալ նման հրապուրիչ ոև աչքերը նրան ուղղած: —Ոիր շուտով Ֆիլիպպովկա է գալիս:

Այս խօսքերը անպէս դիւր չեկան ջաղացպանին, ինչպէս կուսական համբոլիները: «Ճեսնում ես ուր է խփում: —մտածեց նա ինքն իրեն: «Այս, Ֆիլիպպ, Ֆիլիպպ, ալժմ մի լաւ քու գլուխդ պիտի լուսանար: Բալց և արնպէս սիրտ արաւ և աչքերը մի կողմ անելով, ասաց:

—Լաւ բան ես իմացել, Գանիս: Իսկոյն հարսանիքն ես լիշում: Ալժմ ալդ կարելի բան է, քանի որ ես արդէն իմ գլխին ջաղացպան եմ դարձել և շուտով, կարելի է զեղի առաջին հարուստը դառնամ, իսկ դու—մի խեղճ ալրի կնոշ աղջիկ ես:

Աղջիկը ցնցուեց, կարծես օձ խածած լինէր: Դա թռաւ, Ֆիլիպպից հեռացաւ և ձեռներով սիրտը բռնեց:

—Իսկ ես կարծում էի... վալ իմ դլխին.... Էլ ինչո՞ւ էիր ուրեմն, անպիտան, պատուհանը թակում:

—Ալ քեզ բան. ինչն էիր պատուհանը թակում...—պատասխանեց ջաղացպանը: —Ինչո՞ւ չպիտի թակեմ, քանի որ մալրդ ինձ փող է ալրտք: Իսկ դու դուրս պրծար և ուղղակի:

սկսար համբուրումել ի՞նչ անէի... Ուրիշների չափ համբուրուել ես էլ դիտեմ։

Եւ նա դարձեալ ձեռքը նրան մնջնեց. բայց որ ջաղացպանի ձեռքը աղջկատ իրանին չկպահ, իրանը սարսուաց, հէնց իմանաս իժը խալթեց։

—Կորիր, —կանչեց աղջիկը մի ալնպիսի բարկութեամբ, որ ջաղացպանը լստեատ դնաց: —Ես քու թուղթ մանէթանոցդ չեմ, որ քու սեպհականութեան պէս բռնում ես ինձ։ Հապա մի քիչ էլ մօտեցիր, Էն վալը բերեմ զլիսիդ, որ գիտցածդ էլ մտահան անեմ...։

### Ջաղացպանը շիփոթուեց։

—Ի՞նչ տաք աղջիկ ես եղել, ի՞նչ է, ես, մեղալ Աստուծու, ջնուդ եմ, ինչ է, որ ալդպէս անպատիւ ես անում։

—Զնուդ չես, բաս ինչ ես Տասը շահին մէկ մանէթ ես դարձրել, արդ բաւական չէ, զեռ շահն էլ ինձանից ես պահանջում կորիր, ասում եմ, զզուելի մարդ։

—Աղջիկ եմ ասում համ, —ասաց ջաղացպանը և ձեռքով երեսը ծածկեց, կարծես վախենալով, թէ մի գուցէ, ճշմարիտ, աղջկակ բռունցքը հասնի: —Ճեսնում եմ, որ խելքը զլախն մարդը կարող չէ հետդ խօսել Գնա, մօրդ կանչիր։

Բայց պառաւն առանց արդ էլ արդէն խրճից դուրս, էր եկել և խոնարհ զլուխ տալիս ջաղացպանին արդ աւելի դիւր եկաւ, քան թէ աղջկակ հետ խօսակցութիւնը. Նա շտկուցաւ, և նրա սկ ստուերը պատի վրա ալնպէս զլուխը հպարտ հպարտ վեր էր բարձրացել, որ մինչեւ անդամ ջաղացպանն ինքն էլ մտաք էր անում, թէ ինչպէս է որ զվարկը զմից վեր չէ ընկնում։

—Գիտես, պառաւ, ինչո՞ւ եմ եկել, —ասում է ջաղացպանը պառաւին։

—Ա՛ս, ինչպէս չդիտենամ, Երեկի իմ փողի համար ես, եկել։

—Հը՛, քու փողի համար չէ, պառաւ, հապա իմ փողի, —ծիծաղեց ջաղացպանը: —Աւաղակ հօ չեմ, որ զիշերով ուրիշի փողի համար օտարի տունը գնամ։

—Հէնց ուրիշի փողի համար էլ եկել ես, —դրզուած ասաց Գալիան ձեռները կողքին զրած և զէպի ջաղացպանն առաջանալով, —և ոչ թէ քու փողի։

—Թիս, խելադար աղջիկ, —ասաց ջաղացպանը էլի մի.

երկու քալլ լետ քաշուելով:—Աստուած վկալ, ալսպիսի խեռագար աղջիկ սաղ գեղը ման գաս, չես դանիլ, Ոչ միան սաղ գեղը, հապա սաղ նահանդը, Կէ ինքդ մտածիր, ինչ ես սում: Որ մինսակ մարդդ չլինէր, ես քեզ դատարան քաշ կը տալի: բայց մարդդ վկալ չի լինիլ ի հարկէ: Մէկ լաւ միտք արա, աղջի:

—Ի՞նչ կալ միտք անելու, քանի որ ասածս զուտ ճշշմարտութիւն է:

—Ի՞նչ ճշմարտութիւն, չի որ պառաւը պարտք է վերցրել ու չէ դարձրել'

—Սուտ ես խօսում, սուտ ես խօսում, շնչու Նրբ դեռ ջաղացպանի աշկերտ էիր ու ինձ հետ սիլի բիլի անում, ուզում էիր տուն մտնես մեղ մօտ, այն ժամանակ հօ չէիր ասում, թէ լետ ես ուզելու, Բայց հէնց որ աղադ մնուալ ու ինքդ ջաղացպան դարձար, այն ժամանակ բոլոր տուածդ լետ ստացար, դարձեալ քիչ է:

—Հապա ալիւրը:

—Յետող, ինչ է որ..., Ի՞նչ արմէր ալիւրը:

—Զափը վաթսուն կոսէկ, ահա ինչ արմէր, Ուր ուզում ես գնալ, դրանից աժան ոչ ոք չի տալ, թէ կուզ քեզ էլ վրադիր տաս:

—Իսկ մեղանից ինչքան ես աւելի վերցրել:

—Ճես, տես, ուր է գնում: Գու լեզուդ էլ... Խալրկօի լեզուից պակաս չէ: Ես էլ դրան կպատասխանեմ—հապա շահը: Հը, սոար:

Բայց Գալիխան այլ ես ոչինչ չէր պատասխանում: Աղջկերանց արդ լաճախ է պատահում,—կխօսեն կխօսեն, կասեն կասեն, ոնց որ ջաղաց, ու լանկարծ կանդ կառնեն...: Կը կարծես, որ ջուրն է պակաս եկել....: Բայց որտեղ Գառն արտասուքը աղջիւրի նման դուրս վաղեց աղջկալ աչքերից: նամի կողմ քաշուեց ու սպիտակ շապկի թևով սկսաւ աչքերը սրբել:

—Տեղն է,—ասաց ջաղացպանը մի քիչ շփոթուած, բայց և այնպէս ուրախանալով:—Ինչի էիր մարդու վրալ լարձակում: Որ չհաջալիր, չէիր էլ լաց լինիլ:

—Լոիր, լոիր, լոիր, զզուելի շուն:

—Կէ որ ալդպէս է, ինքդ էլ լոիր:

—Լոիր, հոգի ջան, լոիր,—ծանր հառաչելով ասաց

պառաւ մալրը, Խնդը վախենում էր, թէ ջաղացպանը նեղանար, Երեսում էր, որ պառաւը պարտք տալու ճար չունէր.

— Չեմ լոիլ, մալրիկ, չեմ, չեմ,—պատասխանեց աղջկը. Կարծես ջաղացի բոլոր անիները նորից սկսան պտտուիլ— Ակի էլ չեմ լոիլ, թէ որ ուզում էք, նրա աչքերն էլ դուրս կքշեմ, որ մէկ էլ չնամարձակուի անունս կոտրել, պատուհանը թակել, համբուրուել.... Խնչու էիր պատուհանս թակում, ասա, թէ չէ հէնց կրոնեմ մաղերիցդ որ... չեմ մտիկ տալ, որ ջաղացպան ես և հարուստ, Առաջ հո քիթդ չէիր բարձրացրել, ինքոդ էիր նշանում ու անուշ խօսքեր ասում: Խոկ այժմ անքան ես զլուխտ բարձրացրել որ գլխարկդ էլ զլխիդ չի մնում:

— Ախ, սուս կաց, զաւակս, իմ խոնարհ որբուկս,—վըշտահար հառաջով նորից ասաց պառաւը— Խոկ դուք, պան ջաղացպան, մի ննդանաք աղջկանս վրալ, խելքը չի կտրում. Ջահել խելքն ու ջահել սիրտը—ոնց որ եռացող զարեջուր, մէկ է, համ պղտոր է, համ եռցւմ, Բալց որ նստի, խմողներին համ կտար:

— Խոկ Բնձ ինչ, — ասաց ջաղացպանը: — Ես նրա ոչ դառնութիւնն եմ ուզում, ոչ քաղցրութիւնը. ես ձեր ընկերը չեմ. Դու իմ փողս ինձ տուր, մէկ էլ ով է ձեր խրճիթ վրաւ նախողը:

— Ախ, Բնձ անեմ, չունինք. Մի քիչ էլ համբերիր, աղջկանս հետ կաշխատենք, կտանք. Ախ, որ քարովը տամ զըլուխս, երկսիդ համար էլ ցաւի մէջ եմ ընկել, սիրելի Ֆիլիպպ: Հո դիտես, որդուս պէս սիրել եմ քեզ, որ ասես մըտքովս չէր անցնում, թէ այն պարտքն ինձանից պիտի առնես, այն էլ տոկոսներով.... Գոնէ մէկ աղջկանս մարդու տալիր, լաւ էլ փեսացոներ կան,—բալց նա պինդ կացել, ոչ ոքին չի ուղում գնալ: Այն օրից, որ դու աղջկանս մօտեցար, դիւթել-հմալին ես նրան, Բնձ ես արել. Աւելի լաւ է, ասում է, ինձ սաղ-սաղ զերեղման դնեսու իմ խելքիս ինչ ասեմ, որ լուս թողնում էի, որ երկսով ալստեղ ահա միասին անցկացնէք.... Ախ, վայ ինձ....

— Ես Բնձ անեմ,— ասաց չաղացպանը: — Պառաւ, մեր բաներին քու խելքդ չի հասնիլ՝ հարուստ մարդու ծախսն էլ շատ կլինի: Այ, ես էլ ջնուղին պարտք ունիմ—պարտքս տալիս եմ հու: Դուք էլ ձեր պարտքը տուէք,

—Գոնէ մի ամիս էլ համբերիր.

Զաղացպանը գլուխը քորեց ու մտածեց, Պառաւը մի քիչ շարժել էր նրա գութը, մանաւանդ որ մի քիչ դէնն էլ գալակի նախշած շապիկն էր սպիտակին տալիս:

—Դէ լաւ, թէ որ ալզպէս է, տես, ուրեմն ես էլ մի տասը գրոյ վրալ կ'զամ,—ասաց նա—Բալց լաւ է վճարէիր:  
—Ինչ արած, երեխ ճակատիս զիրն է,—հառաջեց պա-

ռաւը:

—Դէ ուրեմն ալզպէս էլ կլինի: Ես ջուդ հո չեմ, ես էլ սիրո ունիմ: Ուրիշը վնէր, հաստատ կասեմ, մի քսան գրոյ անպատճառ կաւելացնէր, իսկ ես միայն տասնով բաւականացալ և մինչև Ֆիլիպպովկա էլ քեզ ժամանակի Բալց տես, այն ժամանակ արդէն վրադ գանգատ կտամ:

Եւ նա, առանց մնաք բարով առելու, շուռ եկաւ ու կողքի ճանապարհը մտաւ: Նա մինչև անդամ մի չգարձաւ, չնակեցաւ խրճիթի կողմը, որի մօտ զիռ սպիտակին էր տա: Վիս նիշշաւոր շապիկը,—բալուտի տակ մութ ստուերի մէջ սպիտակին էր տալիս որպէս սպիտակաւուն աստղ, —և ջաղացպանը չէր տեսնում, թէ ինչպէս լաց էին լինում սկ աչքերը, ինչպէս սպիտակ ձեռները մեկնուած էին դէպի նրան, ինչպէս ախ ու վախ էր անում կրուական կուրծքը:

—Մի լար, հոգիս, մի լար աչքիս լուսը,—ասում էր պառաւ Պրիսենան:—Մի լար, երեխ Աստուած ախ է զրել ճակատներիս:

—Ախ, մալրիկ, մալրիկ, գոնէ թողնէիր մէկ նրա աչքերը հանէի, գուց մի քիչ թեթևանալի:

**Թարգ. ՄՈՒՏԷ Վ.ՍՐԴՅԱՊԵՏ**

(Կը շարունակուի)